ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Է.Մարգարյան

«01» 09 2022 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Ք.Երևան,Ավան**

**Թիվ 104 հիմնական դպրոց, 8բ դասարան**

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

**Աթայան Անահիտ Էդիկի**

դասվարի ազգանունը, անունը, հայրանունը

**« 2022- 2023» ուսումնական տարի**



1

## ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Աշխատանքի ուղղվածությունը | Նախատեսված աշխատանք | Ժամկետը | +/- |
|---|---|---|---|
| Քաղաքացիական, բարոյական-դաստիարակություն *Խնդիրները՝* *Քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության ձևավորում, հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ:* | Անցկացնել զրույցներ՝ քաղաքացու պատասխանատվության, արժանապատվության ձևավորման վերաբերյալ, սերմանել հարգանք երկրի մշակույթի և պատմության հանդեպ: | սեպտեմբեր | + |
| Հոգևոր դաստիարակություն *Խնդիրները՝* *Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:* | Անցկացնել զրույցներ և ձևավորել ազգային /ծիսական/ ավանդույթների , զուտ հայկական արժեհամակարգի, աղանդներից զերծ մնալու , համաշխարհային հոգևոր մշակույթի արժեքների ճանաչման ու ընկալման գործում, հարգանք քրիստոնեության նկատմամբ: Ծիսական տոներից կարևորել Խաչվերացը, Տեառնընդառաջը, Սուրբ Զատիկը և քննարկել աշակերտների հետ: Այցելել եկեղեցական պատմամշակութային կոթողներ: | հոկտեմբեր | + |
| Գեղագիտական-դաստիարակություն *Խնդիրները՝* *Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:* | Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության ուղղությամբ: Այցելել թանգարաններ, պատկերասրահներ, թատրոն: Սովորեցնել տեսնել և գնահատել գեղեցիկը: Աշակերտների մեջ ձևավորել ստեղծագործելու ակտիվություն: | նոյեմբեր | + |

| | | | |
|---|---|---|---|
| Ֆիզիկական առողջության<br>*Խնդիրները՝*<br>*Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:* | *Կարևորել ֆիզկուլտուրայի դասաժամերը, մարմնակրթության դերը, ուշադրություն դարձնել աշակերտների առողջ ապրելակերպին, ճիշտ սննդակարգին, սանիտարահիգիենիկ վիճակին: Համագործակցել բուժքրոջ հետ խստորեն հետևել հակահամաճարակային կանոնների պարտադիր պահպանմանը: Անցկացնել միջդասարանական մրցումներ, նպատակային էքսկուրսիաներ:* | դեկտեմբեր | + |
| Աշխատանքային դաստիարակություն<br>*Խնդիրները՝*<br>*Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:* | Աշակերտների մեջ սեր առաջացնել աշխատանքի նկատմամբ, գնահատել աշխատավոր մարդուն, հասկանալու աշխատանքի կարևորությունը, որ աշխատանքն է մարդուն կերակրում, և այն նաև բարեկեցության հիմնաքարն է, և չկա վատ աշխատանք: Ձևավորել աշխատանքային հմտություններ: Սովորեցնել աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, արժևորել և գնահատել սեփական և ուրիշների աշխատանքը: | հունվար | |
| Էկոլոգիական դաստիարակություն<br>*Խնդիրները՝*<br>*Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում* | Աշակերտների մեջ սեր առաջացնել բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ, ձևավորել էկոլոգիական կուլտուրա, վարք, և գործելակերպ: Հիմնավորել բնապահպանական գիտելիքների օգտագործման անհրաժեշտությունը, բնության նկատմամբ դրսևորել հոգատար վերաբերմունք:Սիրել և պահպանել հայրենի բնաշխարհը: | փետրվար | |
| Ռազմահայրենասիրական դաստիարակություն<br>*Խնդիրները՝*<br>*Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ ֆիդայինների և հայ ազատամարտիկների նկատմամբ:*<br>*Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:* | Ծանոթացնել հայրենիքի պաշտպանության մասին սահմանադրական դրույթներին: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ ֆիդայինների և հայ ազատամարտիկների նկատմամբ:Կարևորել բանակի դերը: Այցելել Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին: Կազմակերպել կինոդիտում ազգային կինոֆոնդի ֆիլմերից: Առանձին զրույցի նյութ դարձնել ազգային-պետական տոները / 21.09, 28.01, Մայիսյան հաղթանակներ/ | մարտ | |

**Դպրոց-ընտանիք կապը** *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույնժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց –ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:*

## ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՀԻՄՆԱԿԱՆԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| **Ուսումնական շաբաթներ** | **Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն** | **Կատարման ամսաթիվ** | **Կատարող** |
|---|---|---|---|
| **I** | Նոր ուսումնական տարի, կազմակերպչական հարցեր | 09.09.22թ | Դասղեկ, աշակերտներ |
| **II** | Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում թեմայով զրույց | 16.09.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **III** | Կապված COVID-19-ի հետ հիգիենա, առողջ ապրելակերպ, անվտանգության կանոնների ապահովման մասին զրույց | 23.09.22 | Դասղեկ, բուժքույր |
| **IV** | <<Մենք ենք տերը մեր երկրի>> թեմայով զրույց | 30.09.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **V** | <<Պատասխանատու քաղաքացի>> թեմայով դաստիարակչական զրույց | 07.10.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **VI** | <<Հայոց բանակի մասին>> հայրենասիրական զրույց | 14.10.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **VII** | <<Մեր անմահ հերոսները>> թեմայով հայրենասիրական զրույց | 21.10.2204. | Դասղեկ, աշակերտներ |
| **VIII** | <<Պետական խորհրդանիշներ >> թեմայով զրույց | 04.11.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **IX** | <<Մեր ժամանակի հերոսները>> թեմայով հայրենասիրական զրույց | 11.11.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **X** | <<Կարող եմ օգտակար լինել>> բարի և դրական հատկանիշներ ձևավորող թեմայով զրույց | 18.11.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **XI** | <<Աշխատանքը կկանգնեցնի ոտքի իմ երկիրը>> թեմայով հայրենասիրական զրույց | 25.11.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **XII** | <<Բնական աղետներ, դրանց առաջացման պատճառները>> թեմայով զրույց | 02.12.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **XIII** | 1988թ. Սպիտակի երկրաշարժը. Զրույց <<Ի՞նչ պետք է իմանալ երկրաշարժի մասին>> թեմայով | 09.12.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **XIV** | <<Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները>> թեմայով զրույց | 16.12.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **XV** | Ինչպե՞ս են դիմավորում Ամանորը այլ երկրներում | 23.12.22 | Դասղեկ, աշակերտներ |
| **XVI** | <<Ուզում եմ օգնել ուրիշներին և ինքս էլ դիմել նրանց՝ օգնության համար >> թեմայով զրույց | 13.01.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XVII** | <<Խառնված տիպերը՝ ես իմ ընկերոջ աչքերով>> թեմայով զրույց | 20.01.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XVIII** | <<Քաղաքավարություն ամեն օր սովորում ենք քաղաքավարության կանեններ>> թեմայով զրույց, կազմում ենք դասարանի կանոնները | 27.01.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XIX** | <<Ունեմ արդյոք վնասակար սովորություն>> թեմայով զրույց | 03.02.23 | Դասղեկ, աշակերտներ |

| | | | |
|---|---|---|---|
| **XX** | <<Էթիկա և էսթետիկա>> թեմայով զրույց- լինենք ավելի բարեկիրթ | 10.02.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXI** | <<Հզար ու հպարտ հայոց բանակ>> թեմայով զրույց | 17.02.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXII** | <<Հարգանք մեծերի նկատմամբ>> թեմայով զրույց | 24.02.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXIII** | <<Ջանասիրություն և բարեխղճություն>> թեմայով զրույց | 03.03.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXIV** | <<Կանանց միջազգային օր>> թեմայով զրույց | 10.03.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXV** | <<Կատակում ենք միասին, ծիծաղի օր>> թեմայով զրույց | 17.03.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXVI** | <<Ինչպես հոգ տանել բույսերի և կենդանիների մասին>> թեմայով զրույց | 24.03.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXVII** | <<Ես հոգատար եմ բնության հանդեպ>> թեմայով զրույց | 07.04.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXVIII** | <<Հայոց մեծ եղեռնի հիշատակի օր>> թեմայով զրույց | 14.04.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXIX** | <<Կառուցենք մեր երկիրը>> թեմայով զրույց | 21.04.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXX** | <<Իմ սուրբ հայրենիք>> թեմայով զրույց | 28.04.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXXI** | <<Իմ վախերը>> թեմայով զրույց | 05.05.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXXII** | <<Եռատոնին նվիրված>> թեմայով զրույց | 12.05.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXXIII** | <<Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին>> թեմայով զրույց | 19.05.23 | Դասղեկ, աշակերտներ |
| **XXXIV** | <<Բացահայտենք մեր հայրենիքը՝ էքսկուրսիա>> թեմայով զրույց | 26.05.23 | Դասղեկ, աշակերտներ |

## ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

| 1-ին կիսամյակ | | 2-րդ կիսամյակ | |
|---|---|---|---|
| Շաբաթվա օրը | դասաժամը | Շաբաթվա օրը | դասաժամը |
| Ուրբաթ | 8-րդ | Ուրբաթ | 8-րդ |